

Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր գյուղը սնող մ/ճ ստորգետնյա

գազատարի վթարային հատվածի վերատեղադրում

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՈՒՂԵԳԺԻ ԻՆՃԵՆԵՐԱ-ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ԱՅԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Հետազոտվող տարածքը գտնվում է վերը նշված գյուղից 2.5 կմ դեպի արևելք: Ուղեգիծն անց է կացված խճուղու եզրով: Նրա բացարձակ նիշը կազմում է 1927.0 – 1940.0մ: Ուղեգծի վերատեղադրվող հատվածի երկարությունը կազմում է 4854.0մ:
2. Կլիմայական տեսակետից տարածքը գտնվում է ՀՀ «ցուրտ» գոտում: Օդի ջեմաստիճանը տատանվում է -32°C $+34^{\circ}\text{C}$ սահմաններում: Ձմռանը գերակշռում են հարավ-արևմտյան, ամռանը՝ հյուսիսային ուղղության քամիները: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 501 մմ:
Գրունտի սառեցման խորությունը կազմում է 116 սմ:
3. Գետմորֆոլոգիական տեսակետից տարածքը գտնվում է լճային հարթավայրի վրա:
4. Երկրաբանական տեսակետից տարածքը գտնվում է կավիճ-միոցենի նստվածքային ապառների վրա, պլիոցեն-պլեյստոցենի ժամանակ ծածկված հրաբխային ապառների հզոր շերտախմբերով:
Վերին պլեյստոցենում տարածքը գտնվել է լճային ռեժիմի պայմաններում:
Ուղեգիծը անց է կացված լճային կուտակումների տեղամասում, որոշ հատվածներում այն անցնում է հրաբխային ժայռային ապառների վրայով:
5. Ուղեգծի գրունտները ներկայացված են հետևյալ տարատեսակներով.

0.0 – 250.0 մ

0.0 – 0.3 – հողաբուսական ծածկույթ

0.3 – 0.8 – ճահիճ – կավավազ սև, հոսուն, օրգանական մնացորդի բարձր պարունակությամբ՝ 30-50%, կոպիճի խառնուրդով՝ 5-10%:

0.8 – 2.0 – ճալաքարա-կոպճային գրունտ հրաբխային ապառներից, ավազային լցանյութով՝ 10-15%: Գրունտը ջրհագեցված է:

250.0 – 3500.0 մ

0.0 – 2.5 – էյուվիալ խիճ բազալտից, խոշոր, արմատական:

3500.0 – 3650.0 մ

0.0 – 2.0 – բազալտի խոշոր քարաբեկորներ, հողմնահարված

3650.0 – 5000.0 մ

0.0 – 0.9 – ճալաքարա-կոպճային գրունտ հրաբխային ապառներից, ավազային լցանյութով՝ 10-15%: Գրունտը սակավ խոնավ է:

0.9 – 2.0 – ճալաքարա-կոպճային գրունտ հրաբխային ապառներից, ավազային լցանյութով՝

10-15%: Գրունտը ջրհագեցված է:

Գրունտի մշակման կարգը, ըստ СНиП -IV-2-82, Ժող-1, աղ. 1, հետևյալն է.

- հողաբուսական ծածկույթ – 9 – 6
- կավավազ – 34 - 6
- ճալաքարա-կոպճային գրունտ – 6 – r
- Բազալտի խոշոր քարաբեկորներ – 19
- Խողովակի վրա և շուրջը՝ լիցք – 24 – 6

Ժամանակակից ֆիզիկա-երկրաբանական պրոցեսներն արտահայտված են գրունտների մակերևույթային հողմնահարումով:

Ինժեներ- երկրաբան

Ս. Սկրտչյան